## Հետաքրքիր է իմանալ

*Հայաստանի Հանրապետության տարածքը երկրաբանական անցյալում ծով է եղել: Ծովի հատակին ընթացել են երկրակեղևի ուղղաձիգ տեղաշարժեր և ծովի հատակը դանդաղորեն բարձրացել է: Դրա ապացույցը ծովային կենդանիների խեցիների մնացորդներն են, որոնք հանդիպում են գետերի նախալեռնային մասերում:*

*Գիտնականները ապացուցում են, որ մեր հանրապետության տարածքը չնայած իր փոքր չափերին ունի ապարների մեծ բազմազանություն, սկսած՝ ամենահնից մինչև ամենաերիտասարդը, ըստ ծագման՝ մագմատիկ (հրային) ապարներ, մետամորֆային, այսինքն՝ փոխակերպված և նստվածքային: Ծաղկունյաց լեռներում մերկանում և աչքով տեսանելի են ամենահին ապարները:*

